



ՆԱՍԴԱՔ ՕԵՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ-Ը ԱՍՓՈՓՈՒՄ Է ԲՈՐՍԱՅԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ, 29.01.2010թ. – Դժվարին տարի լինելով աշխարհի գրեթե բոլոր երկրների բիզնեսների համար, 2009 թվականն, այնուամենայնիվ, բավականին հաջող էր ՆԱՍԴԱՔ ՕԵՄԷՔՍ Արմենիա ֆոնդային բորսայի համար. բորսայի որոշ հարթակներում նույնիսկ աճ է գրանցվել 2008 թվականի համեմատ:

Այսպես, կորպորատիվ պարտատոմսերի գծով, որոնք ըստ շուկայի ցուցանիշների առաջատար ֆինանսական գործիք են հանդիսացել տարվա ընթացքում, գրանցվել է առևտրի ծավալների մոտ 4.7 անգամ ավելացում՝ մինչև 10.55 մլրդ ՀՀ դրամ, իսկ գործարքների թիվը՝ նախորդ տարվա համեմատ կրկնապատկվելով, կազմել է 719: Բորսայական շուկայում առևտրի առավելագույն ծավալներ են գրանցվել «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի (ELTGB2), «Շեն Կոնցեռն» ՓԲԸ-ի (SHNCB4) և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Չայաստան» ՓԲԸ-ի (HSBCB1) կորպորատիվ պարտատոմսերով: 2009 թվականին բորսայում ցուցակվել է կորպորատիվ պարտատոմսերի չորս նոր թողարկում:

Բավականին ակտիվ է եղել նաև պետական պարտատոմսերով առևտուրը՝ կնքվել է թվով 191 գործարք՝ 2.4 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, ինչը նախորդ տարվա նույն ցուցանիշների ավելացում է, համապատասխանաբար, 135%-ով և 43%-ով: ՌԵՊՈ գործիքներով առևտրի տարեկան ծավալը գերազանցել է 5 մլրդ ՀՀ դրամը (հարթակը գործարկվել է 2008թ.-ի դեկտեմբերին):

Տարվա ընթացքում արտարժույթի հարթակում կնքված գործարքների ընդհանուր ծավալը (դրամային արտահայտությամբ) կազմել է 372.93 մլրդ ՀՀ դրամ, ինչն 10%-ով ավել է նախորդ տարվա ցուցանիշից: 2009թ.-ին այս հարթակում գործարքներ են կնքվել միայն ԱՄՆ դոլարով. Եվրոյով գործարք չի կնքվել: Հարկ է նշել, սակայն, որ արտարժույթով արտահայտված առևտրի ծավալը կազմել է 1,079 մլն ԱՄՆ դոլար, ինչը 2.4%-ով պակաս է 2008թ.-ի ծավալից:

Ինչպես և նախորդ տարիներին, բաժնետոմսերի բորսայական հարթակն առավել պակաս ակտիվ հարթակն է եղել: Բորսայում բաժնետոմսերով առևտրի ընդհանուր գումարը կազմել է 98 մլն ՀՀ դրամ, 2008թ.-ի համապատասխան ցուցանիշի համեմատությամբ կրճատվելով 63%-ով: Այս հարթակում առավել ակտիվ են շրջանառել «Ալմաստ» ԲԲԸ-ի (ALMS), «Զարգացման հայկական բանկ» ԲԲԸ-ի (ZHBK) և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի (ARBK) բաժնետոմսերը: 2009 թվականի տարեվերջին շուկայի կապիտալիզացիան կազմել է 53.1 մլրդ ՀՀ դրամ, 2008թ.-ի տարեվերջի համեմատ նվազելով 1.7%-ով, ինչը համեմատաբար դրական զարգացում է, հաշվի առնելով գլոբալ ֆինանսական ճգնաժամի շարունակվող ազդեցությունը: 2009թ.-ը նշանավորվեց նաև Չայաստանում իրականացված բաժնետոմսերի առաջին առաջնային տեղաբաշխմամբ (IPO). այն իրականացվեց «Արցախ ՋԷԿ» ԲԲԸ-ի կողմից, որի բաժնետոմսերն այժմ ցուցակված և շրջանառում են ՆԱՍԴԱՔ ՕԵՄԷՔՍ Արմենիա-ում AHEK բորսայական հապավմամբ:

2009 թվականին Չայաստանի կենտրոնական դեպոզիտարիան (ՀԿԴ) և շարունակեց ծառայություններ մատուցել ֆիզիկական և իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդներին: Տարեվերջի դրությամբ ՀԿԴ-ի կողմից սպասարկվող արժեթղթերով անձնական հաշիվների թիվը կազմել է 156,430, որոնցից 2,540-ը՝ 2009թ.-ի ընթացքում բացված նոր հաշիվներ են: 370-ով ավելացել է նաև ՀԿԴ-ի միջոցով իրենց արժեթղթերի սեփականատերերի ռեստորը վարող ընկերությունների թիվը, տարեվերջին կազմելով 1,527: Տարվա ընթացքում ՀԿԴ-ն նաև համագործակցել է ՀՀ Կառավարության հետ՝ կենսաթոշակային նոր համակարգի ներդրման նախապատրաստման ուղղությամբ, և այս համագործակցությունը կշարունակվի 2010թ.-ին:

ՆԱՍԴԱՔ ՕԵՄԷՔՍ Արմենիա-ի և ՀԿԴ-ի մասին հավելյալ տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք այցելել www.nasdaqomx.am կայքը:



NASDAQ OMX-ի մասին

NASDAQ OMX-ը աշխարհի ամենախոշոր բորսայական ընկերությունն է: Այն բորսայական ծառայություններ է մատուցում և առաջատար տեխնոլոգիաներ վեց մայրցամաքներում գտնվող երկրներում, և ունենալով իր հարթակներում ցուցակված ավելի քան 3,900 ընկերություններ՝ առաջինն է նաև ցուցակված ընկերությունների թվով: NASDAQ OMX-ի տեխնոլոգիաները ներդրված են ավելի քան 50 երկրների 60 բորսաներում, քլիրինգային կազմակերպություններում և կենտրոնական դեպոզիտարիաներում:

2008թ.-ի հունվարին սկանդինավյան երկրներում գործող OMX բորսայական օպերատորը ձեռք է բերել Հայաստանի Ֆոնդային Բորսայի (ՀՖԲ) և Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի (ՀԿԴ) բաժնետոմսերի 100%-ը: 2008թ.-ի փետրվարին NASDAQ-ի և OMX-ի միավորման արդյունքում ստեղծված NASDAQ OMX Group-ը դարձավ ՀՖԲ-ի և ՀԿԴ-ի միակ սեփականատերը: NASDAQ OMX Group-ի մասին լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.nasdaqomx.com կայքը:

27.01.2009թ.-ից “Հայաստանի ֆոնդային բորսա” ԲԲԸ-ն պաշտոնապես վերանվանվել է “ՆԱՍՂԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա” ԲԲԸ-ի: 05.06.2009թ.-ին “ՆԱՍՂԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա” ԲԲԸ-ն դարձավ “Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա” ԲԲԸ-ի բաժնետոմսերի 100%-ի սեփականատերը:

NASDAQ OMX Armenia

ՁԼՄ հետ հաղորդակցման պատասխանատու՝

Մարքետինգի և հաղորդակցությունների դեպարտամենտի տնօրեն

Ռուզաննա Մարգսյան

+374 10 54 33 21 ext.116, rouzanna.sarkissian@nasdaqomx.com